ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Արշալույս Հարությունյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝
Ղազախստան, ք. Ալմաթի, 2024 թվականի մարտի 4-ից 8-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Dynamic Stochastic General Equilibrium, DSGE) մոդելների կառուցմանը նվիրված աշխատաժողովին: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է DSGE մոդելների կառուցման և վերջիններիս մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացում կիրառման մոտեցումները:

5. Քննարկված թեմաները՝

1. Նորքեյնսյան փոքր բաց տնտեսության մոդել.
    - DSGE մոդելավորման էությունը,
    - Տնային տնտեսությունների, ֆիրմաների, կառավարության ներառումը մոդելում,
    - DSGE մոդելի դուրսբերումը,
2. Բաց տնտեսության ընդլայնում.
    - Ներքին և արտաքին ֆինանսական ակտիվներ, անկատար ֆինանսական շուկաներ, երկրի ռիսկի հավելավճար,
    - Ներմուծողներ և արտահանողներ, տնտեսության արտահանելի և ոչ արտահանելի հատվածներ,
    - Վճարային հաշվեկշիռ, ընթացիկ հաշիվ և միջազգային զուտ ներդրումային դիրք,
3. Հարկաբյուջետային հատվածի ընդլայնում.
    - Եկամտային և ծախսային քաղաքականություններ,
4. Բնակչության և տնտեսական աճի ներառում մոդելում.

- Բնակչության աճ և միգրացիա,
- Տեխնոլոգիական աճ և հավասարակշիռ տնտեսական աճ,

5. Այլ թեմաներ.
    - Կարճաժամկետ և երկարաժամկետ սպառման ապրանքների ներառումը մոդելում,
    - Պարտքի կառուցվածք, եկամտաբերության կոր և պարտքային քաղաքականություն,
    - Ապրանքների արտահանում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Իրականացրել եմ գործնական աշխատանքներ, մասնավորապես՝ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելի կառուցում, դրա միջոցով տնտեսական իրավիճակի սիմուլյացիաների և տնտեսական քաղաքականության այլընտրանքային սցենարների մշակում և արդյուքների քննարկում մասնակիցների շրջանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

13 մարտ, 2024թ.